

ԻՆՉՊԵՍ ՊԱՏԱՍԽԱՆԵԼ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ԺԱՄԱՆԱԿ

Հարցազրույցի ժամանակ շատ կարևոր է լավ տպավորություն գործել և ցույց տալ գործատուին, որ դուք առավելագույնս համապատասխանում եք տվյալ աշխատանքին:

1. **Եղեք ճշտապահ:** Միշտ հիշեք, որ Դուք երբեք չեք ունենա առաջին տպավորությունը գործելու այլ հնարավորություն: Աշխատեք ժամանակից շուտ գալ: Դուք միշտ կարող եք մոտակայքում սրճարան, խանութ կամ էլ այլ հարմար վայր գտնել սպասելու համար: Բայց, եթե զգաք, որ ուշանում եք, զանգահարեք և տեղյակ պահեք:

2. **Նախապատրաստվեք:** Նախքան հարցազրույցին գնալը՝ այցելեք գործատուի ինտերնետային կայքը և որոշակի տեղեկություն ստացեք ընկերության գործունեության մասին:

3. **Տնային աշխատանքը կատարեք նախօրոք:** Ընկերության ինտերնետային կայքը կամ այլ տեղեկատվական աղբյուրներ կօգնեն Ձեզ տեղեկություններ ստանալ տվյալ կազմակերպության մասին, ինչը կօգնի Ձեզ վստահ պատասխանել յուրաքանչյուր հարցի և բանիմաց ու քաջատեղյակ մասնագետի տպավորություն գործել գործատուի վրա:

4. **Եղեք ազնիվ:** Իմաստ չունի ստել Ձեր կրթության, աշխատանքային փորձի կամ էլ հմտությունների մասին: Եթե սուտը բացահայտվի, և եթե նույնիսկ Ձեզ հաջողվի այդ տիպի իրադրությունից դուրս գալ, միևնույն է, վստահ եղեք, որ Դուք երկար ժամանակ չեք կարող աշխատել այդ ընկերությունում:

5. **Եղեք հանգիստ և անվրդով:** Եթե զբոսանքը կամ ընթերցանությունը օգնում են Ձեզ լիցքաթափվելու, ապա զբաղվեք դրանցով՝ մինչև հարցազրույցի ներկայանալը:

6. **Ցույց տվեք դրական վերաբերմունք:** Բոլորն էլ նախընտրում են աշխատել լավատես մարդկանց հետ: Անկախ նրանից, թե ինչ հարցեր են Ձեզ տալիս, աշխատեք լինել լավատես և եռանդուն:

7. **Երբեք ցույց մի տվեք այլ մարդկանց թերությունները,** հատկապես նախկին ղեկավարներինը կամ գործընկերներինը: Հարցազրույց վարողը անմիջապես կկարծի, որ Դուք նույնը կարող եք անել նաև իր ընկերությունում:

8. **Հիշեք, որ հարցազրույց վարողը նույնպես մարդ է:** Հանդիպման ժամանակ նա նույնպես կարող է հուզված լինել: Այս միտքը կօգնի Ձեզ իրավիճակը պահել հսկողության տակ:

9. **Եթե Դուք քիչ աշխատանքային փորձ ունեք, նշեք այլ իրադարձություններ** Ձեր կյանքում, որոնք տվել են Ձեզ գործնական փորձ, որը, կարծում եք, կհամապատասխանի այդ պաշտոնին: Օրինակ՝ կամավոր հիմունքներով աշխատանքն անցյալում կարող էր Ձեզ սովորեցնել, թե ինչպես շփվել մարդկանց հետ և արդյունավետորեն օգտագործել ժամանակը:

10. **Եղեք ազնիվ:** Երբեմն ազնվորեն Ձեր հուզվածության մասին բարձրաձայնելը կարող է հեշտությամբ հանել լարվածությունը: Պետք չէ լինել կաշկանդված և խիստ պաշտոնական: Ցույց տվեք, որ Դուք շփվող անձնավորություն եք, սիրում եք տեղին կատակել՝ միաժամանակ երևան հանելով Ձեր արհեստավարժությունը:

11. **Մի մոռացեք, որ հարցազրույցի եք մասնակցում:** Եթե անգամ Ձեզ հաճելի է հարցազրույցը վարողի հետ շփվելը, այնուհանդերձ մտերմանալու և անձնական տեղեկություններ տրամադրելու կարիք չկա:

12. **Կենտրոնացեք Ձեր նպատակի վրա:** Հարցազրույցի ընթացքում օրինակներ բերեք տարբեր աշխատանքային իրավիճակներում որոշումներ կայացնելու վերաբերյալ: Ցույց տվեք, որ Դուք կարող եք մեծ արժեք ներկայացնել ընկերության համար:

13. **Եղեք ճկուն:** Երբեմն հարցազրույցը չի ընթանում այնպես, ինչպես պլանավորված էր: Եթե հարցազրույց վարողը ստիպում է Ձեզ երկար սպասել կամ տալիս է անսպասելի հարցեր, ապա գործեք ըստ իրավիճակի և ցույց տվեք, թե որքան հեշտությամբ եք Դուք կողմնորոշվում տարբեր իրավիճակներում:

14. **Խուսափեք կարճ “այո” կամ “ոչ” պատասխաններից:** Երբ գործատուն Ձեզ հարց է տալիս, փորձեք տալ սպառիչ պատասխան՝ միաժամանակ բերելով տարբեր օրինակներ, որպեսզի մանրամասներով լրացնեք Ձեր պատասխանը:

15. **Բացասականը վերածեք դրականի:** Շատ հարցազրույց վարողներ խնդրում են, որպեսզի մարդիկ նկարագրեն իրենց թույլ կողմերը: Եթե այդպես է, եղեք պատրաստ ներկայացնելու Ձեր այն թույլ կողմը, որը իրականում կարող է շահավետ լինել Ձեր դիմած աշխատանքի համար: Օրինակ, եթե աշխատանքի պահանջներից մեկը հավանական հաճախորդներին զանգահարելն է, ապա դուք

կարող եք ասել, որ Ձեր թույլ կողմերից մեկն է երբեք չհանձնվել, նույնիսկ եթե իրավիճակն անհույս է: Սա կարող է բնավորության լավ գիծ լինել այն աշխատանքում, որը վճռականություն է պահանջում:

16. Հարցեր տվեք: Կազմակերպության գործունեության, ծառայության, նպատակների, ինչպես նաև Ձեր դիմած աշխատատեղի վերաբերյալ հարցեր տվեք աշխատատուին: Դա ցույց կտա Ձեր հետաքրքրվածությունն ու արհեստավարժությունը տվյալ աշխատանքի նկատմամբ:

17. Հաստատեք անմիջական կապ: Նայելով մարդու աչքերին և հարմար պահի ժպտալով նրան՝ Դուք կթողնեք վստահ, գրավիչ և անբռնազբոսիկ մարդու տպավորություն:

18. Հնարավորինս խուսափեք որոշ թեմաներից: Փորձեք հարցազրույցը վարողի ուշադրությունը հրավիրել այն փաստի վրա, թե առանց սահմանափակումների Դուք ինչ կարող եք անել ընկերության համար: Եթե Ձեր երեխաներին խնամելու պատրվակով անհրաժեշտություն կլինի տուն գնալ աշխատանքից ամեն օր ուղիղ ժամը 17:00-ին, ապա իմացեք, որ սա այն պահը չէ այդ թեման շոշափելու համար:

19. Եվ վերաջապես, մի վհատվեք: Խնդիրն այն է, որ Ձեզ ամեն աշխատանք չեն առաջարկի, եթե նույնիսկ, ըստ Ձեզ, Դուք կատարյալ թեկնածուն եք դրա համար: Հարցազրույցների ժամանակ բացահայտած տեղեկությունը կարող է անգնահատելի լինել՝ ապագա արդյունքները բարելավելու համար:

